



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC



Austrian
Development
Cooperation

SDA Strategic
Development Agency
Strategies for Development

«Անասնապահության զարգացում Հայաստանի Հարավում» ծրագիր
«Անասնապահության զարգացում Հայաստանում՝ Հարավ-Հյուսիս» ծրագիր

“Livestock Development in the South of Armenia” project
“Livestock Development in Armenia: South-North” project



ԱՐՈՏՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱԶՈՂՎԱԾ
ՓՈՐՁԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

THE SUCCESSFUL
EXPERIENCE
OF SUSTAINABLE
PASTURE
MANAGEMENT
IN ARMENIA





Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC



«ԱՆԱՍՆԱԴԱՅՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄ»

“LIVESTOCK DEVELOPMENT IN THE SOUTH OF ARMENIA”

*Ծրագրի նպատակը ՀՀ հարավային մարզերում
անասնապահության ոլորտում ներգրավված տղամարդ
և կին ֆերմերների եկամուտների աճի և տնտեսական
հնարավորությունների ընդլայնումն էր:*

Աշխարհագրություն՝ Սյունիքի և Վայոց ձորի
մարզերի 100 գյուղական համայնք

Շահառուներ՝ շուրջ 60,000 բնակիչ
(14,000 տնտեսություն)

Տևողություն՝ 2014-2021

Իրականացնող՝ «Ռազմավարական
Չարգացման Գործակալություն» ՀԿ (ՌԶԳ)

Ֆինանսավորող՝ «Շվեյցարիայի Չարգացման և
Համագործակցության Գործակալության» (ՇՀՀԳ)

*The Project was aimed at increasing economic
opportunities and incomes of male and female farmers
involved in animal husbandry in southern regions
of Armenia.*

Geography: 100 rural settlements of Syunik
and Vayots Dzor marzes

Beneficiaries: 60,000 habitants
(14,000 households)

Duration: 2014 -2021

Implementation: Strategic Development Agency
(SDA) NGO

Funding: Swiss Agency for Cooperation and
Development (SDC)

Արոտների կայուն կառավարմանն ուղղված ինստիտուցիոնալ համակարգի զարգացումն Արենի համայնքի Ռինդ բնակավայրում

Արենի համայնքի Ռինդ գյուղական բնակավայրը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում: Բնակավայրի պայմաններում տնային տնտեսությունների հիմնական զբաղվածության ոլորտներն են անասնապահությունը, դաշտավարությունն ու այգեգործությունը: Ներկայում, բնակավայրի տնային տնտեսությունների գերակշիռ մասը՝ շուրջ 75-80%-ը առավելապես մասնագիտացած են անասնապահությամբ, մասնավորապես կաթնալիս տավարաբուծությունում: Ռինդ բնակավայրում մինչև «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրի մեկնարկը, տնտեսությունների՝ անասնապահությունից ստացված եկամուտները դեռևս ցածր էին և հիմնականում ինքնաբավության խնդիր էին լուծում: Ցածր մթերատվության հիմնական

պատճառներից էին բնակավայրում կերերի արտադրության, կերապահովման և անասնազվաի պահվածքի կազմակերպման խնդիրները, ինչպես մսուրային այնպես էլ արոտային ժամանակահատվածներում: Արոտային ժամանակահատվածում ցածր մթերատվությունը հիմնականում պայմանավորված էր արոտային տարածքների անկայուն և թերի կառավարմամբ, ինչը պայմանավորված էր արոտային շրջանի կազմակերպման գործում ՏԻ մարմինների և շարքային արոտագտագործողների նեղ մասնագիտական կարողությունների պակասով (կայուն արոտագտագործում իրականացնելու գործառնություններին տիրապետելը), հեռավոր արոտային տարածքների սահմանափակ հասանելիությամբ՝ պայմանավորված ենթակառուցվածքների քայքայված վիճակով կամ բացակայությամբ

(կենդանիների համար ջրելատեղեր, գիշերակացի մակատեղեր, ճանապարհներ, կացարաններ):

Ներկայումս բնակավայրի պայմաններում անասնապահության ոլորտից ձևավորվող հիմնական արդյունքը պայմանավորված է արոտային ժամանակահատվածով, երբ ստացվում է տարվա կտրվածքով ձևավորվող արտադրանքի (կաթնամթերք և մսամթերք) հիմնական մասը: Այնուամենայնիվ պայմանավորված արոտային ժամանակահատվածի թերի կազմակերպմամբ և արոտային տարածքների ոչ լիարժեք և ամբողջական օգտագործմամբ, բնակավայրում միջին կաթնատվությունը տարեկան կտրվածքով (1գլուխ կովի հաշվով) չէր գերազանցում 1600լ-ը, ինչի պարագայում ոլորտի ցածր եկամտաբերությունը չէր

կարող մեղմել տնտեսվարողների սոցիալական խնդիրները:

Ռինդ բնակավայրի վարչական տարածքում բնական կերային հանդակների, մասնավորապես արոտավայրերի տարածական բաշխվածությունն ու զբաղեցրած տարածքները, ինչպես նախկինում, այժմ նույնպես որոշիչ նշանակություն կարող էին ունենալ կաթնային անասնապահության զարգացման և բարձր մթերատվության ցուցանիշներ ձևավորելու գործում: Խնդրի հաջող լուծումը ենթադրում էր արոտային անասնապահության զարգացում ապահովող կայուն գործառույթների գործարկում՝ հիմնված արոտավայրերի հասանելիության ապահովման և կայուն արոտագոտագործման կարգեր կիրառելու գործընթացների վրա: Այս առումով բնակավայրի ՏԻ մարմիններն ու անասնապահ տնտեսվարողները աջակցության և օժանդակությունների կարիք ունեին, ինչպես

տնտեսվարման նոր պայմաններում մասնագիտական և ինստիտուցիոնալ կարողությունները զարգացնելու, այնպես էլ արոտավայրերն ամբողջությամբ օգտագործելու կայուն հնարավորություններ ստեղծելու առումներով:

2015 թվականից սկսած ՌԶԳ ՀԿ-ի կողմից Հայաստանի հարավային տարածաշրջաններում իրականացվող «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրի շրջանակներում որպես շահառու համայնք ներգրավվեց Նաև Արենի համայնքի Ռինդ բնակավայրը (նախկինում որպես համայնք): Բնակավայրի պայմաններում անասնապահությունը զարգացնելուն միտված ծրագրային գործառույթները սահմանվեցին ըստ ծրագրային բաղադրիչների: Դաշտավարական կերարտադրության զարգացմանն ուղղված աջակցությունը, մասնավորապես բազմամյա խոտաբույսերի՝ առվույտի և

կորնզանի, միամյա հատիկակերային մշակաբույս գարու նոր ցանքատարածքների հիմնումը և ավելացումը նպաստեցին մսուրային կերապահովման խնդիրների մեղմմանը:

Իրականացվող ծրագրային բաղադրիչներով սահմանված գործառույթներում առավել կարևոր նշանակություն վերապահվեց **արոտային շրջանի կերապահովման, արոտների հասանելիության մեծացման և կայուն արոտագոտագործման** ուղղությամբ պլանավորվող և իրականացվող ծրագրային աշխատանքներին: Այս համատեքստում կարևոր պայման դիտարկվեց **արոտների կառավարման գործընթացի բարելավումը**, ինչին հասնելու համար ՏԻ մարմինների աշխատակազմում և արոտագոտագործող տնտեսվարողներից կազմավորված աշխատանքային խմբի անդամների մոտ շարունակաբար իրականացվող ուսուցումներով և

խորհրդատվությամբ ձևավորվեցին կարողություններ՝ արոտային շրջանը արդյունավետ կազմակերպելու, կայուն արոտագտագործում ապահովող գործառույթների և արոտների կառավարման ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ: Բնակավայրի ՏԻ մարմիններից և արոտագտագործող տնտեսվարողներից ձևավորված աշխատանքային խմբերի հետ գնահատվեցին բնակավայրերի արոտային տարածքների հասանելիության խնդիրները, որտեղ ըստ առաջնահերթությունների հիմնավորվեցին արոտային տարբեր ենթակառուցվածքների անհրաժեշտությունն արոտների հասանելիությունն ապահովելու և կայուն արոտագտագործում իրականացնելու համար: Բնակավայրում արոտային անասնապահության կերապահովման խնդիրը լուծելու, կենդանիների մթերատվությունն ավելացնելու և կայուն կառավարումով արոտավայրերի

բնապահպանական ու տնտեսական վիճակը բարելավելու նպատակով գործարկվեց համայնքային արոտավայրերում իրականացված *դաշտային գնահատումներով ձևավորված արդյունքների հիման վրա մշակված արոտների կառավարման պլանը*՝ համապատասխան քարտեզագրումով և արոտագտագործման օրացուցային գրաֆիկով:

Բնակավայրամերձ արոտային տարածքների խիստ դեգրադացված հատվածներում ծրագրի համաֆինանսավորմամբ իրականացված վերականգնողական բնույթի ցուցադրական բարելավման միջոցառումները նպաստել են *դեգրադացիայի կանխմանն* ու ձևավորված հետևանքների վերականգնմանը՝ *բուսապատվածության խտացման, արոտականաչի արտադրողականության ավելացման ու որակական ցուցանիշի բարձրացմանը*: Իրականացված ծրագրային միջամտու-


թյուններն ուղղակիորեն դրականապես են անդրադարձել բնակավայրում անասնապահության ոլորտից ձևավորվող արդյունքների վրա, միջին ցուցանիշներով բնակավայրում կովերի կաթնատվության ցուցանիշներն *ավելացել են շուրջ 20%-ով, կազմելով միջինը 1900-2000լ (1գլուխ կովի հաշվով)*: Ծրագրային միջամտությունների և գործողությունների ընթացքում արոտավայրերի կառավարման ոլորտի վերաբերյալ ուսուցումներով ՏԻ մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների բարելավումը նպաստել է բնակավայրում նաև *արոտների վարձակալության գործընթացի զարգացմանը*, էականորեն ավելացել են արոտների վարձակալության պայմանագրերը և համապատասխան գանձվող արոտավարձերի (1200դր/գլուխ) մուտքերը համայնքային բյուջե:

Չգալիորեն *բարելավվել է տնային տնտեսությունների սոցիալական*

կարգավիճակը՝ պայմանավորված կաթնային տավարաբուծության ոլորտում կաթնատվության ցուցանիշների ավելացմամբ, ստացվող կաթի ցածր ինքնարժեքով: Ռինդ բնակավայրում արոտային անասնապահության վարման և արոտների կա-

ռավարման ոլորտում ծրագրային միջամտություններով ձևավորված արդյունքների հետագա բարելավումն ու շարունակականության ապահովումը ենթադրում է ՏԻ մարմինների կողմից կազմակերպահրավական դաշտին համապատասխան գործառնությունների

շարունակական գործարկում, ինչը որպես գործընթաց կայուն երաշխիքներ կարող է ապահովել անասնապահության զարգացմամբ սոցիալական խնդիրների լուծման համար:



Development of an Institutional System for Sustainable Pasture Management in Rind Settlement of Areni Community

Rind rural settlement of Areni community is located in Yeghegnadzor area of Vayots Dzor region of the RA. The main occupation of households in the settlement is animal husbandry, field-crop cultivation and gardening. Currently, the majority of households in the settlement, around 75-80% are mostly specialized in animal husbandry, particularly dairy cattle breeding, where income earned by the households is still low, mainly just solving the problem of self-sufficiency. In Rind, before the launch of the “Livestock Development in the South of Armenia” project, the incomes of the farms gained through livestock were still low, mainly solving the problem of self-sufficiency. The main causes of low productivity were the problems connected with fodder production and supply and organization of animal care, both in manger and graz-

ing periods. Low productivity during the grazing period was mainly caused by unsteady and inadequate pasture management because of lack of specific professional capacities of the local self-government bodies and ordinary pasture users required for organization of the pasture season (skills required for implementation of sustainable pasture usage functions) and limited access to remote pastures because of dilapidated infrastructure or entire lack of infrastructure (stock watering places, camping places, roads, shelters).

Currently, the main product of the animal husbandry sector in the settlement is dependent on the grazing period, when the biggest share of the annual production (dairy and meat products) is yielded. However, because of poor organization of the grazing period and inadequate and incomplete use of

pastures, the average annual milk yield in the settlement (per cow) did not exceed 1600 l, whereby the low income generated by the sector could not alleviate the farmers' social problems. As usual, the spatial distribution of natural fodder lands, in particular, pastures, in the administrative area of Rind settlement, could now have a decisive role in development of dairy cattle breeding and achievement of high productivity rates. Positive solution of the problem implied implementation of sustainable functions required for development of pasture animal husbandry, based on the processes of ensuring access to pastures and application of sustainable pasture usage practices. In this regard, the local self-government bodies and livestock farmers of the settlement needed aid and support both in terms of capacity building under new

conditions of running business, and generating steady opportunities for entire use of the pastures.

Since 2015, Rind settlement (formerly a community) of Areni community has been involved as a beneficiary community within the framework of the “Livestock Development in the South of Armenia” Project implemented by SDA NGO in the southern areas of Armenia. The project functions aimed at developing animal husbandry in the settlement were defined according to the project components. Support aimed at development of field fodder production, in particular, establishment of new sown areas for perennial grasses such as melilot and clover and annual grain-food plant barley, contributed to alleviation of fodder supply problems existing in the manger period.

Most important among the functions defined under implemented project

components were the project works aimed at **securing fodder supply for the pasture season, improving access to pastures, and performing sustainable pasture use**. In this regard, it was essential **to improve the pasture management process**. To achieve this target, continuous training programs and consultations were organized for the staff of the local self-government bodies and workgroups consisting of pasture users, due to which capacities were built for performance of functions aimed at efficient management of the pasture season and sustainable pasture use, as well as establishment of an institutional system for pasture management. The problems connected with access to pastures were assessed together with the workgroups formed from the local self-government bodies and pasture users, the need of various pasture infrastructures required to secure access to pastures

and implement sustainable pasture use was determined and prioritized. *The pasture management plan, developed based on the results of field assessments performed* on the pastures of the settlement, was implemented with appropriate mapping and pasture use schedule, in order to address the problem of fodder supply for pasture animal husbandry in the settlement, to increase animal productivity, and improve the environmental and economic condition of the pastures by means of sustainable management.

Demonstrative improvement measures implemented with co-financing under the project on extremely degraded pastures located close to the settlement contributed to *prevention of degradation* and elimination of degradation consequences, thus *thickening vegetation, increasing productivity, and enhancing quality indicators*. The implemented project interventions pro-

duced direct positive impact on the results of the animal husbandry sector in the settlement. Thus, the average milk yield in the settlement *increased by around 20% reaching the average of 1900-2000 l (per cow)*. In the course of the project interventions and relevant actions, improvement of institutional capacities of the local self-government bodies in pasture management as a result of training contributed to

development of the process of renting pastures. The number of pasture lease agreements grew considerably, resulting in respective increase of pasture fees transferred to the community budget (AMD 1200/ head of cattle).

The social situation of the households improved significantly due to the increase in milk yield rates in dairy cattle breeding and the low prime cost of milk. Further development and conti-

nuity of the results achieved in running pasture animal husbandry and pasture management due to the project interventions implies continuous performance by the local self-government bodies of the functions relevant to the organizational-legal field. This process can secure steady guarantees for solution of social problems by means of further development of animal husbandry.



Արոտների կառավարման բնապահպանական արդյունքները Վերիշեն բնակավայրի արոտային էկոլոգիական համակարգերում

Վերիշեն գյուղական բնակավայրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Գորիս համայնքում: Բնակավայրում տնային տնտեսությունների հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է, մասնավորապես անասնապահությունն ու դաշտավարությունը: Ինչպես բոլոր ժամանակներում, այժմ նույնպես բնակավայրի տնային տնտեսությունների հիմնական եկամուտի աղբյուրը առավելապես պայմանավորված է անասնապահությամբ, որտեղ մասնագիտացված են տնտեսությունների շուրջ 90-95%-ը: Բնակավայրի աշխարհագրական տեղադիրքը, կլիմայական պայմաններն ու առկա հողային ֆոնդը, բարենպաստ հնարավորություններ են ստեղծել գյուղատնտեսության երկու հիմնական ճյուղերի՝ անասնապահության և դաշտավարության զարգացման համար: Պայմանավոր-

ված այն հանգամանքով, որ բնակավայրի տարածքում վարելահողերը հիմնականում սակավ են (109.89 հա), դաշտավարությունը որոշիչ դերակատարում չի ունենում տնտեսության զարգացման գործում: Բնակավայրի վարչական տարածքի 66.4%-ը զբաղեցնում են բնական կերային հանդակները՝ արոտավայրերն (4761.66 հա) ու խոտհարքները՝ (493.98 հա), որոնք մշտապես որոշիչ նշանակություն և դերակատարում ունեն տնտեսվարման հիմնական ուղղություն համարվող անասնապահության, մասնավորապես արոտային անասնապահության զարգացման համար:

Ստուրային ժամանակահատվածի համար կոպիտ ծավալային կերի՝ խոտի, պահանջը մշտապես բավարարվել է բնական խոտհարքներից, որտեղ ձևավորվող տեսակներով

հարուստ բուսածածկը ապահովել է բարձր մենդարարությամբ ծավալային կերի՝ խոտի, արտադրությունը: Բնակավայրի վարչական տարածքում լեռնատափաստանայինից մինչև մերձալպյան և ալպյան լանդշաֆտային գոտիներ տարածվող բնական լանդշաֆտների հարուստ տեսակներով արոտային համակեցությունները լիարժեք պայմաններ էին ստեղծում արոտային անասնապահության կերապահովումը կազմակերպելու և բարձր մթերատվություն ապահովելու համար, ինչի վկայությունն են հանդիսանում նախկին Վերիշեն պետական տնտեսության (սովխոզ) ժամանակահատվածում գրանցված ցուցանիշները գյուղատնտեսական արտադրանքի (կաթ, միս) վերաբերյալ: Գրեթե կրկնակի անգամ ավել անասնազվաքանակի պարագայում բնակա-

վայրի արոտային և խոտհարքային բնական տարածքները լիովին ապահովում էին տարվա կտրվածքով պահանջվող կերերի (արոտային կեր և խոտ) քանակները: Խնդիրն առավելապես պայմանավորված էր բնական լանդշաֆտների՝ արոտների և խոտհարքների կանոնավոր և արդյունավետ օգտագործմամբ (արածեցում, խոտհունձ, խնամք), ինչն իրականացվում էր գործող տնտեսության պայմաններում տնտեսվարման հիմնավոր մեթոդների գործարկմամբ և կառավարման գործառնությունների իրականացմամբ, որի պարագայում լանդշաֆտային բուսածածկի արտադրողականությունն ու որակական կազմը հիմնականում պահպանվում էր՝ ապահովելով տարաբնույթ էկոհամակարգային ծառայությունների մատուցումը տնտեսության համար:

Հետագայում՝ տնտեսվարման նոր եղանակի արմատավորման անցումային ժամանակահատվածում, Վերին բնակավայրում անասնապա-

հության ոլորտը որոշակիորեն հետզհետե գրազացում գրանցեց, զգալիորեն կրճատվեց անասնազխաքանակը և նվազեց կենդանիների մթերատվությունը, ինչն առավելապես պայմանավորված էր պահվածքի և կերապահովման խնդիրների լուծման անկատարությամբ: Չնայած այն հանգամանքին, որ համայնքում զգալիորեն կրճատվել էր անասնազխաքանակը, այնուամենայնիվ կերապահովման խնդիրը բնակավայրի պայմաններում խորանում էր: Կերերի արտադրության և կերապահովման խնդիրները հիմնականում պայմանավորված էին տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակով, որի պարագայում հնարավորությունների սահմանափակվածությունն ու տեխնիկատնտեսական դժվարությունները լուրջ պատճառ հանդիսացան համայնքային բնական կերային հանդակների արդյունավետ և ամբողջական օգտագործում իրականացնելու համար:

Պայմանավորված այն հանգամանքով, որ արոտավայրերի զգալի մասը հեռագնա են և տնային տնտեսությունների համար քիչ հասանելի, կամ տեխնիկա-տնտեսական տեսանկյունից օգտագործելու համար քիչ նպատակահարմար, բնակավայրում հաշվառված անասնազխի արոտային կերապահովումն իրականացվում էր հիմնականում բնակավայրամերձ արոտավայրերում, որտեղ անասնազխի խտությունը, ինչպես նաև իրականացվող տարերային արոտօգտագործումը բացասաբար անդրադարձան արոտավայրերի բնապահպանական և տնտեսական վիճակի վրա:

Օգտագործվող արոտավայրերում արտադրողականության ցուցանիշների նվազումը զուգակցվում էր բուսածածկի որակական կազմի աղքատացմամբ, ինչն ուղղակիորեն անդրադառնում էր արոտային անասնապահության կերապահովման և մթերատվության վրա: Բնակավայրա-

մերձ արոտներում լուրջ զարգացում էր ապրում դեգրադացիան, նոսրացած բուսածածկով ռելիեֆային հատվածներում կայուն զարգացում էին ապրում նաև հողի քայքայման՝ էռոզացման երևույթները: Բնակավայրի բնական լանդշաֆտներում խորացող Էկոլոգիական և տնտեսական խնդիրները, ինչպես նաև արոտային անասնապահության կերապահովման խնդիրների լուծումը ենթադրում էր գործուն միջամտություններ բնական կերային հանդակների արդյունավետ օգտագործման կազմակերպման գործում, որի իրականացումը պահանջում էր ինչպես կառավարման հիմնավոր գործընթացների գործարկում, այնպես էլ ներդրումներ՝ արոտային ենթակառուցվածքների ձևավորման և բարելավման համար: Նմանատիպ խնդիրների լուծման համար ՏԻ մարմինները չունեին մասնագիտական և ֆինանսական կարողություններ: Նման կարողությունների ձևավորման և անասնապահու-

թյան զարգացման համար Վերիշեն բնակավայրում արմատական փոփոխություններ գրանցվեցին 2014 թվականից սկսած, երբ ՌԶԳ ՀԿ-ի կողմից Սյունիքի մարզում իրականացվող «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրի շրջանակներում որպես շահառու ներգրավվեց նաև Վերիշեն բնակավայրը (նախկինում որպես համայնք):

Իրականացվող ծրագրի շրջանակներում բնակավայրում անասնապահության ոլորտը զարգացնելու և տնային տնտեսությունների սոցիալական խնդիրները մեղմելու նպատակով գնահատվեցին և գույքագրվեցին անասնապահության ոլորտի հիմնական խնդիրներն ու խոչընդոտները, որի արդյունքում առավել կարևորվեցին արոտային անասնապահության զարգացումը խոչընդոտող խնդիրների լուծմանն ու շրջակա միջավայրի՝ բնական կերային հանդակների պահպանությանն ուղղված ծրագրային գործա-

ռույթները: Իրականացված ծրագրային միջամտություններում առավել կարևոր նշանակություն ունեին արոտային շրջանի կերապահովման, արոտների հասանելիության մեծացման և կայուն արոտօգտագործման գործառույթների վերաբերյալ ծրագրային աշխատանքները: Այս համատեքստում **կարևորվեց արոտների կառավարման գործընթացի բարելավումը:** ՏԻ մարմինների աշխատակազմում և արոտօգտագործող տնտեսավարողներից կազմավորված աշխատանքային խմբերում շարունակաբար իրականացվող ուսուցումներով և խորհրդատվությամբ ձևավորվեցին կարողություններ՝ արոտային շրջանն արդյունավետ կազմակերպելու և կայուն արոտօգտագործում ապահովելու համար: Բնակավայրի պայմաններում իրականացված *դաշտային մոնիտորինգով գնահատվեց արոտային տարածքների տնտեսական և բնապահպանական վիճակը*, ըստ անհրաժեշտու-

թյան և առաջնահերթությունների հիմնավորվեցին արոտային տարբեր *ենթակառուցվածքների անհրաժեշտությունը*՝ արոտների հասանելիությունն ապահովելու և կայուն արոտագործում իրականացնելու համար: Դաշտային գնահատումներով ձևավորված արոտներն հիման վրա մշակված արոտների արդյունավետ *օգտագործման կարգի գործարկումը* արոտային անասնապահության կերապահովման խնդիրը լուծելուց զատ որոշիչ նշանակություն ունեցավ նաև *արոտավայրերի բնապահպանական ու տնտեսական վիճակի բարելավման* վրա: Կայուն կառավարում ապահովելու և արոտների հասանելիությունը մեծացնելու համար, ծրագրի համաֆինանսավորմամբ *ձևավորվեցին և բարելավվեցին արոտային ենթակառուցվածքները* (կենդանիների համար ջրելատեղեր, արոտ տանող ճանապարհներ, հեռագնա պահվածքի համար գիշերակացի մակատեղեր, կացարաններ),

ինչի պարագայում շուրջ 10 և ավելի տարիներ չօգտագործված *ավելի քան 2800 հա հեռագնա արոտավայրերում վերականգնվեց հեռագնա սեզոնային պահվածքը*: Համայնքամերձ հատվածների խիստ դեգրադացված 20 հա արոտային տարածքներում իրականացված արհեստական վերականգնողական բարելավման միջոցառումները նպաստեցին բուսապատվածության և արտադրողականության ավելացմանը, ինչպես նաև բուսատեսակների հարստացմանը: Իրականացված ծրագրային միջամտությունները ուղղակիորեն դրական անդրադարձան բնակավայրում ինչպես անասնապահության ոլորտից ձևավորվող արդյունքներին, այնպես էլ արոտային տարածքների բնապահպանական վիճակին և արտադրողականությանը: *Չգալիորեն կրճատվեց դեգրադացիան*, ի հաշիվ արոտավայրերի հասանելիության մեծացմամբ պայմանավորված արտատեղամասերում անասնազյխի

խտության կրճատմամբ և կառավարմամբ՝ արոտօգտագործման կայուն կարգերի գործարկմամբ: Արդյունքում վերականգնված արոտային բուսածածկի հարստացումն ու պահպանումն ապահովում է տարածաշրջանին բնորոշ հարուստ բնաբազմազանությամբ Էկոհամակարգերի կայունության հավասարակշռումը, տարաբնույթ Էկոհամակարգային ծառայությունների շարունակական մատուցման հարատևության ապահովումը: Այս ամենի շարունակականության և հետագա զարգացման երաշխիք կարելի է համարել բնակավայրում ներդրված և գործարկվող ծրագրային գործառնությունները:



Environmental Outcomes of Pasture Management in Pasture Ecosystems of Verishen Settlement

Verishen rural settlement is located in Goris community, Goris area, Syunik region of the RA. The main occupation of households in the settlement is agriculture, in particular animal husbandry and field-crop cultivation. Currently, just like it has always been, the main source of income for households in the settlement is animal husbandry - around 90-95% of the households are specialized in it. The geographical location of the settlement, the climatic conditions and the existing land reserves created favorable opportunities for development of two branches of agriculture: animal husbandry and field-crop cultivation. Since arable land is scarce in the settlement (109.89 ha), field-crop cultivation does not have a crucial role in development of the local business. 66.4% of the administrative area of the settlement is covered by natural fodder-producing fields

- pastures (4761.66 ha) and meadows (493.98 ha), which are always significant for development of animal husbandry (especially pasture animal husbandry) - the main direction of economic activity in the settlement.

In the manger period the demand for coarse fodder – grass, has always been met by natural meadows with diverse types of vegetation that have provided for production of highly nutrient bulk forage - the grass. The pasture communities rich in vegetation species that cover the natural landscapes with mountain-steppe to subalpine and alpine zones on the administrative area of the settlement, generated all necessary conditions to organize supply of fodder for pasture animal husbandry and achieve high productivity, as evidenced by the agricultural product (milk, meat) results

recorded back in the times of the former state farm (sovkhoz) operated in Verishen. Then, although the livestock population was almost twice as big, the natural pastures and meadows of the settlement provided for full supply of fodder (pasture forage and grass) necessary for the year. It was mainly due to regular and efficient use (grazing, haymaking, proper care) of natural landscapes - pastures and meadows, which was achieved by implementation of sound methods of running business proper for the existing economic conditions and performance of management functions, mainly keeping up the productivity and qualitative composition of vegetation on the landscape, thus ensuring provision of various services pertaining to the business.

Later, during the period of transition to the new method of running busi-

ness, the animal husbandry sector in Verishen settlement experienced certain regress, the livestock population was reduced considerably and animal production dropped, which was mainly the result of inadequate solution of animal care and fodder supply issues. Although the livestock population in the community was reduced considerably, the situation of fodder supply under the existing settlement conditions was worsening. The problems with fodder production and supply were mainly caused by the socio-economic standing of households. Thus, the limited opportunities and technical-economic difficulties were a serious reason for efficient and complete use of natural fodder-producing fields in the community.

Since most of the pastures are remote and not easily accessible to the households and their use is not very expedient from the technical and economic standpoint, grazing for the livestock registered in the settlement was

organized mainly on the neighboring pastures, where density of livestock and spontaneous use of pastures produced negative impact on the environmental and economic conditions of the pastures.

The drop in the productivity rate of the used pastures was combined with impairment of the qualitative composition of the vegetation, which directly affected fodder supply and productivity in the pasture animal husbandry sector. Degradation was deepening on the neighboring pastures; soil erosion was emerging steadily in the relief areas with sparse vegetation. The worsening ecological and economic problems on the natural landscapes of the settlement, as well as the need for solution of fodder supply issues for pasture animal husbandry, implied active interventions in the process of organization of efficient use of natural forage land, which required both implementation of sound management processes and

investments in establishment and improvement of pasture infrastructure. The local self-government bodies did not possess the necessary professional and financial capacities to solve such kinds of problems. For the purpose of development of such capacities and enhancement of the animal husbandry sector, radical changes have been implemented in Verishen settlement since 2014, when Verishen settlement (formerly a community) was involved as a beneficiary within the framework of the “Livestock Development in the South of Armenia” Project implemented by SDA NGO in Syunik region.

In order to achieve development of the animal husbandry sector and alleviate the social problems of the households in the settlement within the framework of the implemented project, the main problems and obstacles existing in the animal husbandry sector were assessed and recorded, and greater importance was attached

to the project functions aimed at solving the problems hindering development of pasture animal husbandry and preservation of natural fodder-producing fields. Highest significance in the project interventions implemented was attached to project works aimed at securing fodder supply for the pasture season, improving access to pastures, and exercising sustainable pasture use functions. In this regard, **it was essential to improve the pasture management process.** To achieve this

target, continuous training programs and consultations were organized for the staff of the local self-government bodies and workgroups consisting of pasture users, due to which capacities were built for performance of functions aimed at efficient management of the pasture season and sustainable pasture use. *The economic and environmental condition of the pastures on the settlement area was assessed by means of conducting field monitoring, the need of various pasture*

infrastructures required to secure access to pastures and implement sustainable pasture use was determined and prioritized. *Implementation of the efficient pasture use procedure*, developed based on the results of field assessments, besides solving the problems connected with supply of fodder for pasture animal husbandry, produced significant impact in terms of *improvement of the environmental and economic condition* of pastures. To achieve sustainable management



and enhance access to pastures, the pasture infrastructures were established and improved with co-financing under the project (stock watering places, roads to pastures, camping places on remote pastures, shelters), due to which *seasonal remote grazing was restored on more than 2800 ha of remote pastures* that had not been used for 10 years and longer. Artificial restoration, i.e. improvement measures implemented on about 204 ha of extremely degraded pastures located close to the

settlement contributed to increased vegetation and productivity, as well as growth of new types of plants. The implemented project interventions produced direct positive impact both on the results of the animal husbandry sector in the settlement and on the environmental condition and productivity of pastures. *Degradation was reduced considerably*, due to decreased density of livestock on pasture areas as a result of improved access to pastures and proper management following im-

plementation of sustainable pasture management procedures. Enrichment and preservation of the restored pasture vegetation ensures the balance of ecosystems with rich natural diversity typical of the region and secures continuity of provision of various ecosystem services. Continuity and further development of the results thus achieved can be guaranteed by the project functions implemented and operated in the settlement.



Արոտների կայուն կառավարման ազդեցությունը Սիսիան համայնքի Բռնակոթ բնակավայրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա

Բռնակոթ գյուղական բնակավայրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքում: Ներկայումս, ինչպես և բոլոր ժամանակներում, բնակավայրի տնային տնտեսությունների հիմնական եկամուտի աղբյուրը անասնապահությունն է, որտեղ մասնագիտացված են ներկայիս տնային տնտեսությունների շուրջ 95%-ը: Խորհրդային պետության ժամանակահատվածում Բռնակոթ գյուղական բնակավայրը արտադրական ցուցանիշներով (անասնաբուծական և դաշտավարական արտադրանքի ցուցանիշներով) մշտապես առաջատար դիրքերում է գտնվել տարածաշրջանում, ինչին առավելապես նպաստել է բնակավայրի աշխարհագրական տեղադիրքը, կլիմայական պայմաններն ու առկա հողային ֆոնդը, որոնց պարագայում կա-

յուն տնտեսվարմամբ, բարենպաստ հնարավորություններ են ստեղծվել գյուղատնտեսության երկու ճյուղերի՝ անասնապահության և դաշտավարության զարգացման համար: Նոր անկախ պետականության անցումային ժամանակահատվածում, ինչպես ՀՀ բոլոր համայնքներում, Բռնակոթ գյուղական բնակավայրում նույնպես տնտեսվարման հիմնական ուղղությունները՝ մասնավորապես դաշտավարությունը, հետընթաց գրանցեց, որի հետևանքով անասնապահության ոլորտում նույնպես կերերի արտադրության և կերապահովման լուրջ խնդիրներ առաջ եկան: Բնակավայրի պայմաններում որպես տնտեսվարման հիմնական ուղղություն կայուն դիրքեր զբաղեցրեց անասնապահությունը, մասնավորապես կաթնալի տավարաբուծությունը: Այնուամե-

նայնիվ, անասնապահությամբ մասնագիտացած տնային տնտեսության եկամուտը բավականին ցածր էր ստացվում և հիմնականում ինքնաբավության խնդիր էր լուծում: Ստացվող ցածր մթերատվության հիմնական պատճառները բնակավայրում կերերի արտադրության, կերապահովման և կենդանիների պահվածքի կազմակերպման խնդիրներն էին, ինչպես մուրային այնպես էլ արոտային ժամանակահատվածներում:

Չնայած, որ բնակավայրի վարչական տարածքում հաշվառված էր 1821,85 հա վարելահողեր, 199.42 հա բնական խոտհարքներ և 3217,72 հա բնական արոտավայրեր, այնուամենայնիվ առկա էր անասնապահության ոլորտի կերապահովման խնդիրը: Կերապահովման խնդիրն ուղղակիորեն պայմանավորված էր վարե-

լաիողերի անմշակ վիճակով և արտավայրերի թերի կառավարմամբ, ինչը պայմանավորված էր նաև որոշակի օբյեկտիվ գործոններով, ինչպիսիք են գյուղատնտեսական տեխնիկայի անբավարարությունն ու որակյալ սերմնացուի պակասը, արոտային շրջանի կազմակերպման գործում ՏԻ մարմինների և շարքային արոտագտագործողների կարողությունների պակասը (կայուն արոտագտագործում իրականացնելու գործառույթների տիրապետումը), արոտային տարածքների սահմանափակ հասանելիությունը՝ պայմանավորված ենթակառուցվածքների քայքայված վիճակով կամ բացակայությամբ (կենդանիների համար ջրելատեղեր, գիշերակացի մակատեղեր, ճանապարհներ, կացարաններ), և կայուն արոտագտագործման ընթացակարգերի կիրառման բացակայությունը:

Բնակավայրի պայմաններում մասնավոր սեփականությամբ վա-

րելահողերի միայն 20-25% էր մշակվում, հիմնականում պարենային նշանակությամբ ցորեն և կարտոֆիլ մշակաբույսերի շրջանացմամբ, շատ փոքր մասը վարելահողերի զբաղեցված էր հատիկակերային մշակաբույս գարու և բազմամյա խոտաբույսեր՝ առվույտի ու կորնգանի ցանքատարածքներով, որոնցից ստացվող կերերը էական նշանակություն չունեին ընդհանուր անասնազխի համար: Բնակավայրի պայմաններում

կերապահովման հիմնական խնդիրը պայմանավորված էր բնական խոտհարքներով և խոտհարքի տակ օգտագործվող անմշակ վարելահողերից ստացվող բուսազանգվածով՝ խոտով (որպես կոպիտ ծավալային կեր), որի որակական ցածր կազմը չէր ապահովում սննդատարրերի այն բավարար պարունակությունը, որ պետք է ապահովեր բարձր մթերատվություն: Բնակավայրի պայմաններում անասնապահության ոլորտից



ձևավորվող հիմնական արդյունքը պայմանավորված էր արոտային ժամանակահատվածով, երբ ստացվում է տարվա կտրվածքով ձևավորվող արտադրանքի (կաթնամթերք և մսամթերք) շուրջ 70%-ը: Այնուամենայնիվ պայմանավորված արոտային ժամանակահատվածի թերի կազմակերպմամբ և արոտային տարածքների ոչ լիարժեք և ամբողջական օգտագործմամբ, բնակավայրում միջին կաթնատվությունը տարեկան կտրվածքով (1գլուխ կովի հաշվով) չէր գերազանցում 1500լ-ը, ինչի պարագայում ոլորտի ցածր եկամտաբերությունը չէր կարող մեղմել տնտեսվարողների սոցիալական խնդիրները: Հիմնական զբաղվածությունն ապահովող անասնապահության ոլորտը տնային տնտեսությունների համար հիմնականում ինքնաբավության խնդիր էր լուծում: Բռնակոթ բնակավայրի վարչական տարածքում բնական կերային հանդակներ

րի, մասնավորապես արոտավայրերի տարածական բաշխվածությունն ու զբաղեցրած տարածքները, ինչպես նախկինում, ներկայումս նույնպես որոշիչ նշանակություն կարող էին ունենալ կաթնային անասնապահության զարգացման և բարձր մթերատու ցուցանիշներ ձևավորելու գործում: *Խնդրի հաջող լուծումը ենթադրում էր արոտային անասնապահության զարգացումն ապահովող կայուն գործառույթների գործարկում, հիմնված արոտավայրերի հասանելիության ապահովման և կայուն արոտօգտագործման կարգեր կիրառելու գործընթացների վրա:* Այս առումով բնակավայրի ՏԻ մարմիններն ու անասնապահ տնտեսվարողները կարիք ունեին աջակցության և օժանդակությունների, ինչպես տնտեսվարման Նոր պայմաններում կարողությունները զարգացնելու, այնպես էլ կայուն հնարավորություններ ստեղծելու առումներով:

2014 թվականից սկսած ՌԶՀ 34-ի կողմից իրականացվող «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրերի շրջանակներում որպես շահառու բնակավայր ներգրավվեց նաև Բռնակոթ բնակավայրը (նախկինում որպես համայնք): Իրականացվող ծրագրերի շրջանակներում բնակավայրում անասնապահության ոլորտը զարգացնելու և տնային տնտեսությունների սոցիալական խնդիրները մեղմելու համար, գնահատվեցին և գույքագրվեցին անասնապահության ոլորտի հիմնական խնդիրներն ու խոչընդոտները, և առավել մեծ կարևորություն տրվեց *արոտային անասնապահության զարգացումը խոչընդոտող խնդիրների լուծմանն ուղղված ծրագրային գործառույթներին:* Բնակավայրի պայմաններում անասնապահությունը զարգացնելուն միտված ծրագրային գործառույթները սահմանվեցին ըստ ծրագրային

բաղադրիչների: Մասնավորապես՝ աջակցություն տրամադրվեց դաշտավարական կերարտադրության զարգացմանը, հատկապես բազմամյա խոտաբույսերի՝ առվույտի և կորնզանի, միամյա հատիկակերային մշակաբույս գարու և կերային արմատապտղավոր կերի ճակնդեղի նոր ցանքատարածքներ հիմանը՝ նպաստելով մսուրային կերապահովման խնդիրները մեղմմանը: Կենդանիների ցեղատեսակի բարելավման ու անասնաբուժական ծառայությունների հասանելիության մեծացմանն ուղղված ծրագրային գործողությունները, որ իրականացվում էր տոհմային բարձր արժեքներով կենդանիների փոխանակման, արհեստական սերմնավորման գործընթացը զարգացնելու և կայուն անասնաբուժական ծառայություններ մատուցելու հնարավորություններ ստեղծելով, նոր խթան հանդիսացան տնային տնտեսություններում ոլոր-

տի հետ կապված խնդիրները լուծելու առումով: Իրականացված ծրագրային միջամտություններում առավել կարևոր նշանակություն ունեին արոտային շրջանի կերապահովման, արոտների հասանելիության մեծացման և կայուն արոտագոտագործման գործառույթների վերաբերյալ ծրագրային աշխատանքները: Այս համատեքստում կարևոր էր արոտների կառավարման գործընթացի բարելավումը, ինչին հասնելու համար, ՏԻ մարմինների աշխատակազմում և արոտագոտագործող տնտեսավարողներից կազմավորված աշխատանքային խմբերում շարունակաբար իրականացվող ուսուցումներով և խորհրդատվությամբ ձևավորվեցին կարողություններ արոտային շրջանը արդյունավետ կազմակերպելու և կայուն արոտագոտագործում ապահովող գործառույթների վերաբերյալ:

Բնակավայրի ՏԻ մարմիններից և արոտագոտագործող տնտեսավարող-

Training courses and consultation helped improve the capacities of the local self-government bodies in terms of organization of the pasture season and pasture management. Owing to establishment of infrastructures on the pastures of the administrative areas in the settlements of the community and introduction of efficient pasture use methods, pasture fodder supply for pasture animal husbandry was improved significantly, the milk yield indices were raised. As a result of improved accessibility of remote pastures, around one third of the community livestock is currently taken to remote pastures for the pasture season, reducing the load on the pastures close to the community and decreasing the livestock density on pastures. As a result of it, degradation of pastures was

prevented, the ecological condition is being gradually restored due to natural growth, thickening and enrichment of vegetation resulted in improvement of its qualitative and quantitative indicators.

As a result of training and consultations, the vicious habit of burning grass and residues on unused pastures was prevented, as it endangered the natural diversity and caused destruction of perennial meadow plants, thus giving rise to various environmental problems.

Sector-related training courses organized by SDA NGO and consultations aimed at development of capacities provided to the managerial staff of the community and farmers engaged in animal husbandry contributed to improvement of capacities and abilities of the staff of the local self-government bodies and households of the animal husbandry sector in terms of pasture management. Implementation of the pasture management process in the community settlements had a positive

impact on productivity of pasture animal husbandry. It resulted in almost double increase in payment of rental fees for pastures, which provides for a new opportunity to raise income in the community and cover the costs needed for maintenance of the existing infrastructures and establishment of new ones. As a result of projects implemented, the number of livestock and its productivity in the community has increased by about 20 percent. From the environmental standpoint, performance of the current pasture management functions has provided additional guarantees for maintenance of natural fodder-producing fields, in particular - pastures, in the administrative area of the community, for mitigation of artificial risks to biodiversity, and for securing conditions required for proper development of natural ecosystems. The latter will provide for continuity and longevity of various ecological services provided with the use of pasture ecosystems.

Շիրակի մարզի Ամասիա համայնքի ԱԿԿ հաջողված պատմություն

Ամասիան Շիրակի մարզի խոշորացված համայնքներից է, որն իր մեջ ներառում է համայնքային վարչական միավոր հանդիսացող տասը գյուղական բնակավայրեր՝ Ամասիա, Արեգնադեմ, Գտաշեն, Կամխուտ, Ողջի, Բյուրակն, Մեղրաշատ, Յովտուն, Բանդիվան և Ջրածոր:

Մինչ տարածաշրջանում ՌԶԳ ՀԿ-ի կողմից իրականացվող «Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս» ծրագրի իրագործումն, Ամասիա համայնքում տնտեսվարման հիմնական ուղղություն համարվող անասնապահության ոլորտը չունեի զարգացման կայուն հնարավորություններ: Մասնավորապես համայնքային բնակավայրերում արոտային անասնապահության վարումն ու արոտային շրջանի կազմակերպումը եղել է տարերային, իսկ կենսական նշանակություն ունեցող

արոտային ենթակառուցվածքները կամ քայքայված էին և օգտագործման համար գրեթե անպետք, կամ ընդհանրապես գոյություն չունեին: Համայնքային բնակավայրերում արոտային կերապահովման խնդրի լուծման գործում առկա խոչընդոտները թույլ չէին տալիս ՏԻ մարմիններին արդյունավետ կառավարել, իսկ արոտօգտագործողներին՝ լիարժեք կազմակերպել արոտային շրջանը: Կազմակերպչական հմտությունների, մասնագիտական կարողությունների, օրենսդրական կարգի և անհրաժեշտ տեխնիկական միջոցների բացակայության ու ֆերմերների ցածր կենսամակարդակի պայմաններում դժվար էր ապահովել արոտների ճիշտ և արդյունավետ կառավարումը և օգտագործումը:

Համայնքում իրականացվող ծրագրային ուսումնասիրությունների արդ-

յունքում ՌԶԳ ՀԿ-ի կողմից բացահայտվել են ոլորտային խնդիրները, գնահատվել դրանց լուծման հնարավորությունները և ծրագրային տարբեր բաղադրիչներով սահմանվել են ոլորտային լուծումների առաջնահերթ գործառնությունները: Ծրագրային ժամանակահատվածում առավել կարևորվել են արոտային անասնապահության, արոտային կերապահովման, արոտների հասանելիության մեծացման և կայուն արոտօգտագործման ուղղությամբ տարվող աշխատանքները: Այս համատեքստում առաջնահերթ էր արոտային ժամանակահատվածի կազմակերպման և արոտների կառավարման գործընթացի բարելավումը: Այս նպատակով կազմակերպվող ուսուցման և խորհրդատվության միջոցով ՏԻ մարմինների աշխատակազմի և արոտօգտագործող տնտեսվարող-

ների մոտ ձևավորվեցին արոտային ժամանակահատվածն արդյունավետ կազմակերպելու, կայուն արոտագործում ապահովող գործառույթների և արոտների կառավարման ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ կարողություններ: Համայնքային ՏԻ մարմիններից և արոտագործող տնտեսվարողներից ձևավորված աշխատանքային խմբերի հետ գնահատվեց համայնքի արոտային տարածքների հասանելիության խնդիրները, որտեղ ըստ առաջնահերթությունների հիմնավորվեց արոտային տարբեր ենթակառուցվածքների անհրաժեշտությունը՝ արոտների հասանելիությունն ապահովելու և կայուն արոտագործում իրականացնելու համար: Համապատասխան քարտեզագրմամբ և արոտագործման օրացուցային նախագծով գործարկվեց համայնքային արոտավայրերում իրականացված դաշտային գնահատումների

արդյունքների հիման վրա մշակված արոտների կառավարման պլանը՝ համայնքային բնակավայրերում արոտային անասնապահության կերակահովման խնդիրը լուծելու, կենդանիների մթերատվությունը ավելացնելու և կայուն կառավարմամբ արոտավայրերի բնապահպանական ու տնտեսական վիճակը բարելավելու նպատակով: Ծրագրի համաֆինանսավորումամբ ձևավորվեցին և բարելավվեցին արոտային տարբեր ենթակառուցվածքներ (կենդանիների համար ջրելատեղեր, արոտ տանող ճանապարհներ, հեռագնա պահվածքի համար գիշերակացի մակատեղեր, կացարաններ)՝ արդյունավետ և կայուն արոտագործում իրականացնելու միջոցով հեռագնա արոտների հասանելիությունը մեծացնելու համար: Արդյունքում շուրջ 1450 հա հեռագնա արոտավայրերում վերականգնվեց հեռագնա սեզոնային պահվածքը: Բնակավայ-

րամերձ արոտային տարածքներում անասնազվի խտության նվազումը և օգտագործման ժամանակահատվածի սահմանափակումները նպաստեցին դեգրադացիայի մեղմմանն ու առաջացած հետևանքների վերականգնմանը՝ բուսապատվածության խտացման, արոտականաչի արտադրականության ավելացման ու որակական ցուցանիշի բարձրացման միջոցով: Իրականացված ծրագրային միջամտություններն ուղղակիորեն դրականապես են անդրադարձել համայնքային բնակավայրերում անասնապահության ոլորտից ձևավորվող արդյունքներին. միջին ցուցանիշներով կովերի տարվա կտրվածքով ապահովվող կաթնատվությունն ավելացել է շուրջ 18-20%-ով: Ծրագրային միջամտությունների և գործողությունների ընթացքում արոտավայրերի կառավարման ոլորտում ՏԻ մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների բարելավումը նաև

նպաստել է բնակավայրում արոտների վարձակալության գործընթացի զարգացմանը. էականորեն ավելացել են արոտների վարձակալության պայմանագրերը, համապատասխանաբար ավելացել են նաև գանձվող արոտավարների մուտքերը համայնքային բյուջե: Կաթնային տավարաբուծության ոլորտում կաթնատվության ցուցանիշների ավելացման և ստացվող կաթի ցածր ինքնարժեքի ձևավորման արդյունքում զգալիորեն

բարելավվել են տնային տնտեսությունների սոցիալական խնդիրները: Ամասիա համայնքի բնակավայրում արոտային անասնապահության վարման և արոտների կառավարման ոլորտում ծրագրային միջամտություններով ձևավորված արդյունքների հետագա բարելավումն ու շարունակականության ապահովումը ենթադրում է ՏԻ մարմինների կողմից կազմակերպարավական դաշտին համապատասխան գործառնությունների

շարունակական գործարկում, ինչը, որպես գործընթաց կայուն երաշխիքներ կարող է ապահովել տնտեսվարման հիմնական ուղղություն հանդիսացող անասնապահության ճյուղի հետագա զարգացման միջոցով սոցիալական խնդիրների լուծման, ինչպես նաև շրջակա միջավայրի՝ բնական կերային հանդակների բնապահպանական և տնտեսական վիճակի կայունացման ու պահպանման համար:



Success Story of Sustainable Pasture Management in Amasia Community of Shirak Region

Amasia is one of the enlarged communities of Shirak region. It is located in the North-Western part of the Republic of Armenia and includes ten rural settlements - community administrative units: Amasia, Aregnadem, Gtashen, Kamkhut, Voghji, Byurakn, Meghrashat, Hovtun, Bandivan, and Jradzor.

Before implementation of the “Livestock Development in the South of Armenia” Project by SDA in the area, the animal husbandry sector, considered to be the main business in Amasia community, did not have opportunities for sustainable development. In particular, management of pasture animal husbandry and organization of the pasture season in the community settlements was spontaneous and the pasture infrastructures of vital importance were both dilapidated and

nearly useless or did not exist at all. The obstacles to solution of the fodder supply problems that existed in the community settlements did not allow the local self-government bodies to manage the pasture season efficiently, and the pasture users – to organize it properly. It was difficult to achieve proper and effective management and use of pastures given the lack of organizational skills, professional capacities, legislative procedures, necessary technical facilities, and the low living standard of farmers.

The studies conducted in the community by SDA NGO within the framework of the project revealed the main problems existing in the sector, the opportunities for solving them were assessed, and the priority functions were defined under various project components. Highest significance

during project implementation was attached to project works aimed at pasture animal husbandry, securing pasture fodder supply, improving access to pastures, and exercising sustainable pasture use. In this regard, it was essential to improve the pasture season organization and pasture management process. To achieve this target, training programs and consultations were organized for the staff of the local self-government bodies and pasture users, due to which capacities were built for efficient organization of the pasture season, performance of functions aimed at sustainable pasture use and the institutional system of pasture management. The problems connected with access to the community pastures were assessed together with the workgroups formed from the local self-government bodies and pasture users, and the need of various pasture

infrastructures required to secure access to pastures and implement sustainable pasture use was justified and prioritized. The pasture management plan, developed based on the results of field assessments performed on the community pastures, was implemented with appropriate mapping and pasture use schedule, in order to address the problem of fodder supply for pasture animal husbandry in the community settlements, to increase animal productivity, and improve the environmental and economic condition of the pastures by means of sustainable management. To achieve efficient and sustainable pasture use by enhancing access to remote pastures, various pasture infrastructures (stock watering places, roads to pastures, camping places on remote pastures, shelters) were established and improved with co-financing under the project. Within the framework of this, seasonal remote

grazing was restored on more than 1450 ha of remote pastures. Decrease of the density of livestock on pasture areas located close to the settlements and limitation of the pasture use period contributed to prevention of further degradation and elimination of degradation consequences, thus thickening and increasing the vegetation productivity, while enhancing its quality indicators. The implemented project interventions produced direct positive impact on the results of the animal husbandry sector in the community settlements - the average annual milk yield of cows increased by around 18-20%. In the course of the project interventions and relevant actions, improvement of institutional capacities of the local self-government bodies in pasture management contributed to development of the process of renting pastures in the settlements. The number of pasture lease agreements grew considerably, resulting in respec-

tive increase of pasture fees transferred to the community budget. The social situation of the households improved significantly due to the increase in milk yield rates in dairy cattle breeding and the low prime cost of milk produced. Further improvement and continuity of the results achieved in running pasture animal husbandry and pasture management in the settlements of Amasia community due to the project interventions implies continuous performance by the local self-government bodies of the functions relevant to the organizational-legal field. This process can secure steady guarantees for solution of social problems by means of further development of animal husbandry as the main business in the community, as well as for stabilization and preservation of the ecological and economic condition of the environment - natural fodder-producing fields.

ԱԿԿ-ի ներդրման արդյունքում բարելավվել են Բերդ համայնքի ՏԻ մարմինների կարողությունները, արոտների կայուն օգտագործման հնարավորությունները

ՈԶԳ ՀԿ-ի կողմից իրականացվող «Անասնապահության զարգացում Հայաստանում հարավ-հյուսիս» ծրագիրը կենսական կարևորություն ունեցավ Բերդ համայնքի ֆերմերների համար, որոնց գերակշիռ մասի հիմնական զբաղվույթը անասնապահությունն է: Մինչ ծրագրի իրականացումը, Բերդ համայնքի գյուղական բնակավայրերում արոտային անասնապահության վարումն ու արոտային շրջանի կազմակերպումն իրականացվել է տարերային և անկանոն ձևով: Կենդանիների արոտային պահվածքն ու կերապահովումը համաձայն սովորույթի իրականացվել է անասնապահ ֆերմերների և հովիվների իմացության մակարդակով՝ հիմնականում ավանդական եղանակով: Տնտեսվարման նման վարվելաձևը համայնքի գյուղական բնակա-

վայրերում պայմանավորված էր նաև առկա բազմաբնույթ խոչընդոտներով և խնդիրներով: Գոյություն ունեցող խնդիրների շարքում առաջնային էր ՏԻ մարմինների և շարքային արոտօգտագործողների կարողությունների զարգացումն ու բարելավումն արոտային ժամանակահատվածի կազմակերպման և արոտների կառավարման ուղղությամբ: Կարևորվում էր նաև համայնքի վարչական տարածքում առկա հեռագնա արոտների հասանելիությունն ու կայուն արոտօգտագործման հնարավորությունն ապահովող ենթակառուցվածքների (արոտ տանող դաշտամիջյան ճանապարհներ, անասնագլխի խմելաջրի ապահովման ջրելատեղեր, հեռագնա պահվածքի կազմակերպման համար գիշերակացի մակատեղեր և կացարաններ) ստեղծումը կամ բա-

րելավմանն ուղղված ներդրումների իրականացումը: Նախկինում Բերդ համայնքի գյուղական բնակավայրերում արոտային ժամանակահատվածը հիմնականում կազմակերպվում էր երկզոնային եղանակով, որի դեպքում մեծ նշանակություն էր տրվում հատկապես հեռագնա պահվածքին: Հեռագնա արոտների համայնքային բնակավայրերի հեռավորությամբ և այդ տարածքներ հասնելու ու տեղում սեզոնային հեռագնա պահվածք իրականացնելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությամբ պայմանավորված՝ քայքայված վիճակով այդ արոտավայրերը օգտագործվում էին կամ մասամբ, կամ ընդհանրապես չէին օգտագործվում: Արդյունքում անասնագլխի հիմնական մասը արոտի էր դուրս բերվում բնակավայրամերձ հատվածի արո-

տատեղամասերում: Այս պարագայում անասնազխի խտությունը և նույն արոտավայրում իրականացվող տնական արածեցումները նպաստել էին արոտատեղամասերի զգալի հատվածների դեգրադացմանը և անասնազխի թերսնմամբ պայմանավորված մթերատվության նվազմանը: Արոտային շրջանի արդյունավետ վարման՝ արոտային կերապահովման խնդիրների լուծման, կայուն արոտագործման կարգեր գործարկելու և արոտավայրերի բնապահպանական կայուն վիճակը պահպանելու համար, ծրագրի աջակցությամբ գործողություններ իրականացվեցին ՏԻ մարմինների և արոտագործող տնտեսվարողների կարողությունները զարգացնելու՝ արոտների կայուն կառավարմանն ուղղված նոր կարողություններ ձևավորելու և արոտների հասանելիությունը ապահովող նոր ենթակառուցվածքներ ստեղծելու նպատակով: Կազմակերպված

մասնագիտական ուսուցումներն ու շարունակաբար մատուցվող խորհրդատվություններն արոտային շրջանի կազմակերպման, անասնապահության վարման և արոտների կառավարման վերաբերյալ, ՏԻ մարմինների՝ համայնքային աշխատակազմի, ինչպես նաև արոտագործող տնտեսվարողների մոտ բարելավվել և ձևավորել են կայուն կարողություններ և մասնագիտական հմտություններ արոտային շրջանի կազմակերպման և արոտավայրերի կառավարմանն ուղղությամբ: ՏԻ մարմինների հետ համատեղ մշակված արոտների կառավարման պլաններով ամրագրված արոտագործման ընթացակարգերի գործարկումից և ինստիտուցիոնալ համակարգերի ներդրումից հետո բարելավվել են արոտների կառավարման ոլորտում համայնքի աշխատակազմի կարողությունները, կառավարման հմտությունները: Համաֆինանսավորմամբ իրականաց-

ված ներդրումներով համայնքային արոտավայրերում ձևավորված նպատակային ենթակառուցվածքները՝ ճանապարհները, ջրախմուցները, հեռագնա պահվածքի և գիշերակացի մակատեղերը ներկայումս ապահովում են բավարար հնարավորություններ նաև հեռագնա արոտների հասանելիության և տարածաշրջանին բնորոշ երկզոնային պահվածքով արոտագործման իրականացման համար: Բնակավայրամերձ դեգրադացված արոտավայրերում իրականացված արհեստական վերականգնման շնորհիվ վերջիններս բարելավվել են: Նախկինում ձևավորված և զարգացող բնապահպանական խնդիրները նվազել են՝ նպաստելով համայնքային արոտների բնապահպանական վիճակի կայունացմանը, արոտային բուսածածկի պահպանմանը, ինչպես նաև արոտային կերերով կերապահովմանն ու գյուղ. կենդանիների մթերատվության ավելացմանը: Իրակա-

նացված ծրագիրը զգալիորեն ազդել է համայնքում անասնազառնակի ավելացման և կենդանիների որակական կազմի բարելավման վրա, ավելացել է տոհմային Ջերսեյ, Սիմենթալ ցեղատեսակի կենդանիների քանակը, իսկ կաթնատվության ցուցանիշները աճել են 12-15 տոկոսով: Ավելացել են ֆերմերների ֆինանսական մոնիթերը, բարելավվել է նրանց սոցիալ-տնտեսական վիճակը: Անասնապահությունից ստացված իրենց եկամուտները ֆերմերները կապում են արոտների արդյունավետ կառավարման ու բնապահպանական խնդիրների լուծման հետ: Համայնքի վարչակազմը մշտապես կապի մեջ է ֆերմերների հետ՝ ձեռք բերված հաջողությունները պահպանելու և ոլորտում շարունակական զարգացում ապահովելու ուղղությամբ:



Introduction of Sustainable Pasture Management Resulted in Improvement of Capabilities of the Local Self-Government Bodies and Enhancement of Opportunities for Sustainable Use of Pastures in Berd Community

The “Livestock Development in the South of Armenia” Project implemented by SDA was vital for the farmers of Berd community, most of who are engaged in animal husbandry. Prior to implementation of the Project, management of pasture animal husbandry and organization of the pasture season in the rural settlements of Berd community was spontaneous and irregular. Normally, pasture animal husbandry and supply of fodder were at the level of knowledge of cattle breeding farmers and shepherds, mainly in the traditional way. Such economic behavior in the rural areas of the community was also caused by various obstacles and problems. Among the existing problems, the most prominent ones were the development and improvement of the capacity of the local self-govern-

ment bodies and pasture users, as well as enhancement of organization of the pasture period and pasture management. Access to remote pastures on the administrative area of the community and investments in establishment and improvement of pasture infrastructures (field roads leading to pastures, stock watering places, camping places on remote pastures, and shelters) enhancing sustainable pasture use were emphasized as well. Previously, the pasture season in the rural settlements of Berd community was organized mainly on two zones, attaching high importance to grazing on remote pastures. Because of big distance between remote pastures and the community settlements, as well as lack or dilapidated state of infrastructure necessary for reaching those areas

and grazing on remote pastures, such pastures were either used partially or were not used at all. Therefore, grazing for the majority of livestock was organized on the neighboring pastures. Because of this, density of livestock and long-lasting pasture use contributed to degradation and vegetation impoverishment of large areas of pastures because of malnutrition of the livestock. With the purpose of efficient management of the pasture season – solving the problems with pasture fodder supply, implementation of the sustainable pasture use procedures and maintaining steady environmental condition of the pastures, works were conducted within the framework of the project in order to enhance the capacities of the staff of the local self-government bodies and pasture users, to

develop new capacities for sustainable management of pastures and establish infrastructure needed for easy access to the pastures. The professional training courses and continuous consultations on organization of the pasture season, animal husbandry, and pasture management arranged for the community staff of the local self-government bodies and pasture users developed and improved their steady capacities and professional skills for organization of the pasture season and pasture management. After the launch of the pasture use procedures established within the pasture management plans developed jointly with the local self-government bodies and introduction of institutional systems, the pasture management capacities and skills of the community staff were enhanced. The target infrastructures – roads, stock watering places, remote grazing, and overnight shelters created on the community pastures at the expense of investments made on the

co-financing principle currently provide for sufficient opportunities also for access to remote pastures and pasture use in the two-zone manner typical for the region. Artificial restoration, i.e. improvement measures implemented on the degraded pastures located close to the settlement, contributed to improvement of the pasture conditions. The environmental problems arisen and deepening previously have been reduced, contributing to stabilization of the environmental condition of community pastures, keeping up of the pasture vegetation, as well as increasing of pasture fodder supply and productivity of farm animals. The implemented project had a significant impact on increasing the number of livestock in the community, improving the quality of animals, raising the number of pedigree Jersey, Simmental animals, and milk yield rates by 12-15 percent. The amounts transferred to the community budget by farmers increased as well and the social and

economic situation of the households improved. The farmers attribute their revenues from animal husbandry to efficient pasture management and solution of environmental problems. The community administration is always in touch with the farmers to maintain the success achieved and to ensure continuous development in the sector.



Արոտների կառավարման գործընթացի բարելավումը Ճամբարակ համայնքում

Ճամբարակը Գեղարքունիքի մարզի խոշորացված համայնքներից է: Գտնվում է Հայաստանի Հանրապետության արևելյան սահմանին և իր մեջ ներառում է Ճամբարակ, Այգուտ, Անտառամեջ, Գետիկ, Դարաբակ, Թթուջուր, Կալավան, Ձորավանք, Մարտունի և Վահան գյուղական բնակավայրերը: Համայնքի գյուղական բնակավայրերում տնային տնտեսությունների հիմնական զբաղվածության ոլորտները անասնապահությունն ու դաշտավարությունն են: Անասնաբուծությամբ զբաղվող տնտեսություններն հիմնականում մասնագիտացված են կաթնային տավարաբուծության մեջ: Տնային տնտեսությունների եկամուտները ներկայումս դեռևս ցածր է և հիմնականում ինքնաբավության խնդիր է լուծում: Դա է թերևս պատճառը, որ համայնքի բնակավայրե-

րում սոցիալական և տնտեսական խնդիրները բավականին բարձր են: Ցածր մթերատվության հիմնական պատճառները բնակավայրում կերերի արտադրության, կերապահովման և անասնազիխի պահվածքի կազմակերպման խնդիրներն են, ինչպես մտորային այնպես էլ արոտային ժամանակահատվածներում: Արոտային ժամանակահատվածում ցածր մթերատվությունը հիմնականում պայմանավորված է արոտային տարածքների անկայուն և թերի օգտագործումով, ինչը պայմանավորված է արոտային շրջանի կազմակերպման գործում ՏԻ մարմինների և շարքային արոտօգտագործողների կարողությունների պակասով (կայուն արոտօգտագործում իրականացնելու գործառնություններին տիրապետելը), հեռազնա արոտային տարածքների սահմանափակ հասանելիությամբ՝

պայմանավորված ենթակառուցվածքների քայքայված վիճակով կամ բացակայությամբ (կենդանիների համար ջրելատեղեր, գիշերակացի մակատեղեր, ճանապարհներ, կացարաններ):

Մինչեվ 2018թ., նախքան ՌԶԳՀ-ի կողմից իրականացվող «Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս» ծրագիրը, համայնքում արոտային անասնապահության վարման հիմնական եղանակը եղել անկանոն, ոչ լիարժեք ու տարբերային: Համայնքում մշտապես առնչվել են այնպիսի խոչընդոտների հետ, որոնք թույլ չեն տվել պատկան մարմիններին արդյունավետ կառավարել, իսկ արոտօգտագործողներին՝ լիարժեք կազմակերպել արոտային շրջանը: Կենսական նշանակության արոտային ենթակառուցվածքների պակասը, կամ վերա-

կառուցման հնարավորությունների սահմանափակվածությունն ու բացակայությունը էական ազդեցություն են ունեցել արոտային անասնապահության մթերատվության վրա: Կազմակերպչական հմտությունների, օրենսդրական կարգի, անհրաժեշտ տեխնիկական միջոցների և համապատասխան մասնագետների բացակայությունը լուրջ դժվարություններ էր ստեղծել համայնքի գյուղական բնակավայրերում արոտների կանոնակարգված և արդյունավետ կառավարման ու օգտագործման կազմակերպումը:

ՈՉԳ ՀԿ-ի կողմից իրականացվող «Անասնապահության զարգացում Հայաստանում» հարավ-հյուսիս» ծրագրի շրջանակում 2018թ.-ից համայնքում իրականացված ոլորտային ներդրումների և տեխնիկական աջակցության արդյունքում դրական և տեսանելի տեղաշարժեր գրանցվեցին համայնքի գյուղական բնա-

կավայրերում, մասնավորապես արոտավայրերում ենթակառուցվածքների (դաշտամիջյան ճանապարհներ, կթի սրահ, հովվի կացարան, մակատեղի, արոտների ջրարբիացում և ջրախմոցներ) ստեղծումով հեռագնա արոտների հասանելիության մեծացմամբ: Դեգրադացված արոտավայրերի բարելավումները նպաստել են ճամբարակ խոշորացված համայնքի արոտների և բնական խոտհարքների տարածքների պահպանմանն ու բարելավմանը, առկա և հնարավոր բնապահպանական խնդիրների կրճատմանը: Արդյունքում, բնակավայրում բավականին կրճատվել են անկանոն օգտագործվող արոտային տարածքները, սկսել է կազմակերպվել հերթափոխային արածեցում, կա կայուն ջրամատակարարում, իսկ արոտ տանող ճանապարհները բարեկարգ են ու տեղ-տեղ ավելի կարճ ու մատչելի: Ծրագրի արդյունքում բարելավվել է

ճամբարակ համայնքի ՏԻ մարմինների արոտների կառավարման կարողություններն ու հնարավորությունները, որի արդյունքում ստեղծվել են բավարար հնարավորություններ արոտային անասնապահության արդյունավետությունը բարձրացնող արոտների կառավարման գործընթացը բարելավելու և անասնաբուծության ոլորտի արտադրողականությունը, մթերատվությունը բարձրացնելու համար:

Հեռագնա արոտների հասանելիության մեծացումով զգալիորեն կրճատվեց անասնագլխի սեզոնային խտությունը բնակավայրամերձ արոտավայրերում, ինչի պարագայում ձևավորվել են բավարար հնարավորություններ բնական ընթացքով արոտավայրերի ինքնավերականգնումը ապահովելու և հնարավոր բնապահպանական խնդիրները մեղմելու համար: Ծրագրի շրջանակներում տարբեր բաղադրիչներով իրա-

կանացված գործառույթները՝ բարձր մթերատվությամբ կովերի փոխանակումը, անասնաբույժի հաստիքների ստեղծումը, անասնաբուժական կետերի կառուցումը, դաշտավարական կերարտադրության վարումը Էականորեն նպաստել են համայնքային բնակավայրերում անասնապահության զարգացմանը: Ներկայումս համայնքի բնակավայրերում արոտային անասնապահության արտադրողականությունը՝ կաթնատվությունը միջին հաշվով ավելացել է 15-20 տոկոսով: Վերջինս լուրջ խթան է հանդիսացել նաև երիտասարդների համար անասնապահությամբ

զբաղվելու գործում, քանի որ տնային տնտեսությունների տնտեսական խնդիրների լուծման հնարավորությունն այլևս բարելավվել է: Դրական փոփոխությունների և նոր տեխնիկական հնարավորությունների արդյունքում ավանդականը ընթանում է նոր գործառույթների հետ, օրինակ՝ կենդանիների պահվածքի և խնամքի նոր մոտեցումները, ԽԵԿ-ի արհեստական սերմավորումը, ձեռքով կթի հետ նաև կթի ագրեգատներով կթի կազմակերպումը: Հնի ու նորի համադրումը ֆերմերների առօրյա կյանքի իրական պատկերն է: ՌԶԳ ՀԿ-ի հետ արդյունավետ համագործակ-

ցության արդյունքում, համայնքում ստեղծածի պահպանումը հիմա ամենակարևորն է, քանի որ կենսական կարևորության խնդիրների լուծումով աճել է ֆերմերների եկամուտը, բարելավվել նրանց սոցիալ-տնտեսական վիճակը, և որ ամենակարևորն է՝ ապագայի հանդեպ նրանց վստահությունն է ավելացել: Ֆերմերները գոհ են անասնապահությունից ստացված իրենց եկամուտներից, ավելացրել են կենդանիների գլխաքանակը, որը պայմանավորված է կերապահովման խնդրի լուծման՝ արոտների արդյունավետ կառավարման և մթերատվության ավելացման հետ:



Improvement of Pasture Management in Tchambarak Community

Tchambarak is one of the enlarged communities of Gegharkunik region. It is located near the Eastern border of the Republic of Armenia and includes Tchambarak, Aygut, Antaramej, Getik, Dprabak, Ttujur, Kalavan, Dzoravank, Martuni and Vahan rural settlements. The main occupation of households in the rural settlement is animal husbandry and field-crop cultivation. The households engaged in animal husbandry are mainly specialized in dairy cattle breeding. The income of the households is still low currently, mainly just solving the problem of self-sufficiency. This is probably the reason why the socio-economic problems in the settlements of the community are rather acute. The main causes of low productivity are the problems existing in the settlements in connection with fodder production, supply and organization of livestock keeping, both in manger and grazing periods.

Low productivity during the grazing period is mainly caused by unsteady and inadequate pasture use because of lack of professional capacities of the local self-government bodies and ordinary pasture users required for organization of the pasture season (skills required for implementation of sustainable pasture use functions) and limited access to remote pastures because of dilapidated infrastructure or entire lack of infrastructure (stock watering places, camping places, roads, shelters).

Until year 2018, i.e. before implementation of the “Livestock Development in the South of Armenia” Project by SDA NGO, management of pasture animal husbandry in the community was irregular, inadequate, and spontaneous. There were always obstacles in the community, which prevented the relevant authorities from effective management, and the pasture users

from adequate organization of the pasture season. Lack of vital pasture infrastructures or limited and missing opportunities to reconstruct them seriously affected pasture livestock production. Lack of organizational skills, legislative procedures, required technical facilities and relevant specialists created serious difficulties for organizing regular and effective management and use of pastures in the rural settlements of the community.

As a result of sectoral investments and technical support implemented in the community since 2018 within the framework of the “Livestock Development in the South of Armenia” Project by SDA NGO, there were positive and visible changes in the rural settlements of the community. In particular, owing to establishment of infrastructures on pastures (field roads, milking stalls, shepherd’s lodging, camping places,

irrigation, and watering places), access to remote pastures increased; improvement of the condition of degraded pastures contributed to preservation and improvement of pastures and natural meadows in the enlarged community of Tchambarak and mitigation of current and potential environmental problems. As a result, irregular use of pastures in the settlement is reduced significantly, shift grazing is organized, there is steady water supply, and the roads leading to pastures are improved and, in some places, they are shorter and more easily accessible. Owing to the project, the pasture management capacities and abilities of the local self-government bodies of Tchambarak community were improved, which gave rise to sufficient opportunity to improve the pasture management process that enhances efficiency of pasture animal husbandry, and increase the productivity rate of the animal breeding sector.

Improved access to remote pastures considerably reduced the seasonal density of livestock on pasture areas located close to the settlements, thus creating sufficient opportunities to secure self-restoration of the pastures in the natural manner and mitigation of the possible environmental problems. The functions implemented within different components of the project such as exchange of cows with high productivity, opening positions for veterinaries, construction of veterinary points, fodder production by means of field-crop cultivation have significantly contributed to development of animal husbandry in the community settlements. Currently, productivity of pasture animal husbandry - milk yield - in the settlements is increased by 15-20 percent. This has been a serious incentive for young people to get engaged in animal husbandry, since there are currently greater possibilities for solution of the financial problems of households. As a result

of positive changes and new technical capacities, the traditional is combined with new functions, such as new approaches to animal breeding and care, artificial insemination of cattle, manual milking combined with milking installations. The combination of the old and the new is the real picture of farmers' daily life.

The most important task now is to preserve what was achieved in the community owing to the efficient cooperation with SDA NGO, since solution of vital problems has increased farmers' income, improved their socio-economic situation and, most importantly, enhanced their trust in the future. Farmers are satisfied with their income from animal husbandry, they have increased the livestock, which is due to solution of the problem of fodder supply, sustainable pasture management and increased productivity.



ԱՐՈՏՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՅՈՂԱԾ
ՓՈՐՁԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

THE SUCCESSFUL
EXPERIENCE
OF SUSTAINABLE
PASTURE
MANAGEMENT
IN ARMENIA



«ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՉԱՐԳԱՑՄԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ»
(ՌԶԳ) ՀԿ

“STRATEGIC
DEVELOPMENT
AGENCY”
(SDA) NGO

Գլխամասային գրասենյակ
ՀՀ, 0070, ք. Երևան,
Այգեստան 5-րդ փող., տուն 3/1

Head Office
5 Aygestan St., #3/1
Yerevan 0070, RA

Հեռ` / Tel.: (+374-10) 57-15-59; (+374-10) 51-75-28; Բջջ./Mob.: (+374-93) 33-55-84

Ֆաքս` / Fax: (+374-10) 57-15-59

E-mail: sdaoffice@sdaoffice.com

www.sda.am